

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

**ԱՐՏԱԿԱՐԳ ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՄԲ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

Մասնակից՝ Հայրապետյան Աստղիկ

Ագարակի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Ն. Ջավադյան

**Վերապատրաստումը իրականացնող
կազմակերպություն՝
Կապանի թիվ 2 ավագ դպրոց
2022 թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1. Պատկերացումը նդունակությունների մասին. Արտակարգը նդունակությունների ընդհանուր բնութագիրը	
1.1 Ընդունակությունների ընդհանուր բնութագիրը	5
1.2 Ընդունակությունների չափման խնդրը ժամանակակից հոգեբանության ասպարեզում	7
1.3 Արտակարգ օժտվածություն ամբողջականների հետ մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները	10
Գլուխ 2. Դպրոցական կուլտիվում արտակարգ օժտվածության տեր աշակերտների սոցիալ – հոգեբանական հարմարման առանձնահատկությունների հետազոտություն	
2.1. Ավագ դպրոցում արտակարգ օժտվածություն ամբ ողջականների սոցիալ – հոգեբանական ադապտացիայի առանձնահատկությունները պարզող հետազոտության քանակական տվյալները	15
2.2. Ավագ դպրոցում արտակարգ օժտվածություն ամբ ողջականների սոցիալ – հոգեբանական ադապտացիայի առանձնահատկությունները պարզող հետազոտության տվյալների վերլուծություն	25
Եզրակացություն	31
Գրականություն	33

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում սոցիալ-հոգեբանորեն հարմարված լինելը՝ ուսումնական գործում արդյունավետ կերպով ներգրավվելու, ուսումնական նյութը արագ և հիմնավոր կերպով յուրացնելու կարևորագույն նախադրյալներից մեկն է: Այս համատեքստում հատուկ գործնական հետաքրքրություն է ներկայացնում դպրոցում արտառոց օժտվածությամբ երեխայի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի խնդիրը:

Սույն թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արտակարգ օժտվածությամբ աշակերտը որոշակի դժվարություններ է ունենում հասակակիցների կուլեկտիվում ներգրավվելիս: Այլ կերպ ասած, նրանց սոցիալականացման գործընթացը աչքի է ընկնում ուրույն դժվարություններով: Անշուշտ, եթե նման երեխաները հաճախել են մանկապարտեզ և ըստ այդմ դեռ վաղ մանկական տարիքից ձեռք են բերել հաղորդակցական հմտություններ, ինչը հատկապես կարևոր է, սովորել են, որ կուլեկտիվում իրենց վերաբերվելու են «հավասարության» սկզբունքով, այսինքն՝ ինչպես բոլորին, ապա արդեն դպրոցական տարիքում նրանց ադապտացիայի գործընթացը դպրոցում ավելի հեշտ կընթանա: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ հասակակիցներից տարբերվելու հանգամանքը էապես բարդացնում է դպրոցականի ադապտացիայի գործընթացը ավագ դպրոցական տարիքում: Բնականաբար նման երեխաները հասակակիցների կուլեկտիվում ինտեգրվելու, ուսումնական գործընթացում լիարժեք ներգրավվելու խնդիր են ունենում: Ըստ այդմ՝ նրանք հոգեբանամանկավարժական հատուկ վերաբերմունքի կարիք ունեն: Ինչպի՞սի հոգեբանամանկավարժական հնարքներ են հարկավոր նման աշակերտների՝

դպրոցական պայմանների հարմարումը հեշտացնելու համար: Այս հարցի պատասխանն է, որ մենք փորձելու ենք տալ սույն աշխատանքում:

Աշխատանքի նպատակն է վեր հանել արտակարգ օժտվածությամբ դպրոցականի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի օբյեկտիվ բարդությունները, առաջարկել հոգեբանամանկավարժական հնարքներ և մոտեցումներ, որոնք դյուրին կդարձնեն արտակարգ օժտվածության տեր դպրոցականի սոցիալ-հոգեբանական ադապտացիան ավագ դպրոցում:

Սույն աշխատանքի համատեքստում մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ հետազոտական խնդիրները.

- Ուսումնասիրել արտակարգ օժտվածության, տաղանդի հոգեբանական նկարագիրը,
- Ուսումնասիրել հանրակրթական դպրոցում արտակարգ օժտվածությամբ դպրոցականի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի գործընթացը,
- Վեր հանել հանրակրթական դպրոցում արտակարգ օժտվածությամբ դպրոցականների սոցիալ-հոգեբանական ադապտացիան դյուրին դարձնող հոգեբանամանկավարժական մոտեցումներն ու հնարքները:

Սույն համատեքստում մեր կողմից կիրառվել է հոգեբանական հարցման մեթոդը, որի միջոցով մենք փորձել ենք վեր հանել արտակարգ օժտվածության տեր դպրոցականի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի առանձնահատկություններն ավագ դպրոցում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթագլուխները, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից և կազմում է 34 էջ:

Առաջին գլխում խոսվում է օժտվածության հոգեբանական նկարագրի մասին, տրվում է ընդունակությունների բնութագիրը, նշվում են ընդունակությունների չափման վերաբերյալ ժամանակակից հոգեբանության ասպարեզում հայտնի մոտեցումները: Այստեղ անդրադարձ է արված նաև արտառոց ունակությունների տեր ավագ դպրոցականների հետ մանկավարժական աշխատանքի առանձնահատկություններին:

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է փորձարարական հետազոտությանը: Այստեղ շարադրված է մեր կողմից անցկացված հետազոտության արդյունքների վերլուծությունը, որտեղ հիմնավորվում է արտառոց օժտվածությամբ երեխայի վրա հանրակրթական դպրոցի հոգեբանորեն հասունացնող ազդեցությունն ունենալու գաղափարը:

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Ընդունակությունների ընդհանուր բնութագիրը

Գործունեության յուրաքանչյուր բնագավառում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել որոշակի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, տիրապետել գործունեության կատարման հնարներին, անհրաժեշտության դեպքում յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ: Բայց ինչպես հոգեբանական ուսումնասիրությունները, այնպես էլ մանկավարժների, ծնողների, արտադրության աշխատողների առօրյա դիտումները համոզիչ կերպով վկայում են, որ ըստ նոր գիտելիքների և հմտությունների ձեռք բերման արագության և դյուրինության, ըստ այդ գիտելիքների լայնության ու խորության և ըստ հմտությունների կատարման վարպետության աստիճանի՝ մարդկանց միջև մեծ տարբերություններ կան: Մնացած հավասար պայմաններում միևնույն գիտելիքը ձեռք բերելու համար աշակերտներից մեկը կարող է ծախսել ավելի շատ ժամանակ ու կրկնություններ, քան մյուսը: Եթե սովորելու մնացած պայմաններն իսկապես նույնն են, ապա կարելի է ենթադրել, որ այդ երկու աշակերտներն ունեն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ներքին հոգեկան տարբեր հնարավորություններ: Որևէ մեկը մեկ տարում կամ նույնիսկ ավելի կարճ ժամանակահատվածում կարող է ազատ տիրապետել նոր օտար լեզվի, մինչդեռ մեկ ուրիշը նույն լեզվին տիրապետելու համար ծախսում է չորսից հինգ տարի կամ ավելի: Հասկանալի է, որ նրանց միջև ներհոգեկան լուրջ տարբերություններ կան:

Ընդունակություններն անձի այն ներհոգեկան առանձնահատկություններն են ու դրանց համադրությունները, որոնք նրան թույլ են տալիս տիրապետել որոշակի գործունեության կատարման համար անհրաժեշտ գիտելիքների,

կարողությունների և հմտությունների և արդյունավետորեն կատարել այդ գործունեությունը: Ընդունակությունները գիտելիքների և հմտությունների յուրացման ներքին պայմաններն են և չեն կարող հանգեցվել այդ գիտելիքներին և հմտություններին, այսինքն՝ ընդունակությունների դրսևորման և օգտագործման արդյունքներին:¹

Որևէ գործունեության կատարման համար մարդու ընդունակ կամ անընդունակ լինելը ստուգվում է փորձով: Այդ հարցին պատասխանելու համար ներկայումս, դիտումներից բացի, օգտագործվում են նաև հոգեբանական թեստեր:

Որպես բարդ հոգեկան երևույթներ, ընդունակությունները կարող են դասակարգվել ըստ տարբեր չափանիշների: Տարբերում են իրական և պոտենցիալ ընդունակություններ: Պոտենցիալ անվանում են մարդու այնպիսի ընդունակությունները, որոնց բնական նախադրյալները մարդու մեջ կան, բայց ուսուցման, վարժությունների և աշխատանքի միջոցով դեռևս չեն զարգացել ու ձևավորվել: Իրական անվանում են արդեն ձևավորված ընդունակությունը, որը մարդուն թույլ է տալիս արդյունավետ գործունեություն կատարել: Այնուհետև առանձնացվում են ընդհանուր ընդունակությունը կամ մտավոր ընդհանուր օժտվածությունը և մի շարք հատուկ ընդունակություններ: Ընդհանուր օժտվածությունը մարդու խելքն է, խնդիրներ լուծելու ընդունակությունն ընդհանրապես: Ըստ որոշ հոգեբանների՝ ընդհանուր օժտվածությունը հիմնականում ժառանգականորեն է պայմանավորված: Հատուկ ընդունակությունները վերաբերում են ոչ թե ընդհանրապես մարդու խելքին, այլ գործունեության որոշակի տեսակների հաջողությամբ տիրապետելու և կատարելու ներքին հնարավորությանը: Դրանցից են լեզվական, մաթեմատիկական, երաժշտական, գրական, դերասանական, մեխանիկական կամ բարդ շարժողական գործողությունների տիրապետելու, մարզական և այլ ընդունակություններ, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ունի տարատեսակներ:²

Նպատակահարմար է առանձնացնել ոչ միայն ընդունակությունների տեսակները, այլև մարդկանց տիպավորել ըստ այդ ընդունակությունների: Այստեղ համառոտակի ծանոթանանք հոգեբանական բնագավառում քիչ թե շատ հայտնի տիպավորումներին: Տարբերում են գեղարվեստական և մտածական

¹Նալչաջյան, 2016, էջ 59

²Նալչաջյան, 2013, էջ 24

տիպերը: Գեղարվեստական տիպին պատկանող անձինք տպավորվող են, նրանց ընկալումներն ու հիշողության մտապատկերները պայծառ են, հուզականորեն հագեցած: Այդ մարդիկ հակված են կատարելու պատկերավոր համեմատություններ, որոնք հաճախ գեղարվեստական արժեք ունեն և վկայում են գեղարվեստական օժտվածության մասին: Նկարիչների, քանդակագործների, երաժիշտների, դերասանների ճնշող մեծամասնությունը այս տիպին է պատկանում: Օժտվածության այս տիպը սովորաբար դրսևորվում է վաղ տարիքում: Մտածական տիպին պատկանող մարդիկ հակված են իրենց առջև ծառայող խնդիրները լուծել հիմնականում խոսքային-տրամաբանական մտածողության օգնությամբ: Նրանք ևս օգտագործում են պատկերներ, բայց դրանց նշանակությունն այնքան մեծ չէ, ինչքան գեղարվեստական տիպին պատկանող մարդկանց կյանքում: Տարբերում են նաև ինտուիտիվ և տրամաբանական տիպերը: Առաջին տիպին պատկանում են այն անձինք, ովքեր ընդունակ են և հակում ունեն կատարելու կռահումներ, հեշտությամբ «գլխի են ընկնում», թե ինչպիսին պետք է լինեն խնդիրների հավանական լուծումները: Տրամաբանական տիպին պատկանող անձինք սիրում են ղեկավարվել ձևական տրամաբանության օրենքներով, նրանց երևակայությունը զսպվում է «սառը» բանականության կողմից, իսկ նրանց ինտուիցիան մնում է թույլ զարգացած, սաղմնային վիճակում և աչքի չի ընկնում արդյունավետությամբ: Ինտուիտիվ տիպի անձանց երբեմն անվանում են ռոմանտիկներ, իսկ տրամաբանական տիպին պատկանողներին՝ ռեալիստներ: Մեր կարծիքով այդ անվանումներն այնքան էլ ճիշտ չեն. մտքի ինտուիտիվ փայլատակումը մարդու առջև հաճախ իրականության ավելի խոր շերտեր է բացում, քան հայտնի ուղիներով ընթացող ձևական-տրամաբանական մտածողությունը:³

1.2 Ընդունակությունների չափման խնդիրը ժամանակակից հոգեբանության ասպարեզում

Ընդունակությունների չափման համար նախատեսված թեստերն այժմ արդեն բավականին մեծաթիվ են: Դրանցից մի քանիսը նախատեսված են ընդհանուր բանականությունը չափելու համար և ցույց են տալիս, թե ինչ չափով մարդն ունի բազմազան տեսակի խնդիրներ լուծելու ընդունակություն: Կան նաև ընդունակությունների ստուգման այնպիսի թեստեր, որոնց օգնությամբ

³ Лык, 1978, стр. 43-59

բացահայտում են հատուկ ընդունակությունների զարգացման աստիճանը: Կան շատ այլ թեստեր ևս, որոնց օգնությամբ փորձում են կանխատեսել գործունեության տարբեր բնագավառներում մարդկանց՝ հաջողությունների հասնելու հավանականությունը: Քանի որ ընդունակություններից շատերն ունեն բարդ կառուցվածք, ապա սովորաբար օգտագործում են ոչ թե մեկ առանձին թեստ, այլ մի քանի թեստերի խումբ՝ մարտկոց: Իսկ ինչպե՞ս են հոգեբաններն ընտրում այն հարցերը, խնդիրները, որոնք պետք է մտնեն թեստերի մարտկոցի մեջ: Այս խնդիրը լուծելիս հետևում են երկու սկզբունքի: Առաջինն այն է, որ բանականությունն իսկապես չափում են միայն այն թեստերը, որոնց տրվող պատասխանները փոփոխվում են երեխաների տարիքային զարգացման ընթացքում: Նման հարցերի ընտրությունն իհարկե պետք է կատարել ոչ թե առանձին անհատի, այլ մեծ թվով անհատների փորձարկելու հիման վրա՝ միջին վիճակագրական արդյունքներ դուրս բերելով: Հարցերի ընտրության մյուս սկզբունքն այն է, որ յուրաքանչյուր հարց պետք է այնպիսի արդյունք տա, որը համապատասխանում է ողջ թեստի տված արդյունքին: Այս երկու պայմանների բավարարման դեպքում թեստը կլինի և՛ հուսալի, և՛ արժեքավոր:⁴

Գերմանացի հոգեբան Վիլյամ Շտեռնը մարդու մտավոր օժտվածության աստիճանը քանակապես արտահայտելու նպատակով դեռ 1912 թվականին մտցրել է հատուկ ցուցիչ՝ բանականության գործակից (ԲԳ), որն այժմ լայն կիրառություն ունի: Այդ գործակիցը որոշում են հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\text{ԲԳ} = \frac{\text{ԶԶԶԶԶԶ ԶԶԶԶԶԶ}}{\text{ԶԶԶԶԶԶ ԶԶԶԶԶԶ}} \times 100:$$

Եթե ուսումնասիրվող երեխայի իրական տարիքը 10 է, և նա լուծում է 10 տարեկանին համապատասխանող թեստ, այսինքն՝ ՄՏ-ն նույնպես 10 է, ապա

$$\text{ԲԳ} = \frac{10}{10} \times 100 = 100:$$

Ընդհանրապես ԲԳ = 100 մեծությունը բնորոշում է մտավոր օժտվածության միջին մակարդակը:

Եթե 10 տարեկան երեխան լուծում է 12 տարեկանին համապատասխանող թեստեր, ապա

$$\text{ԲԳ} = \frac{12}{10} \times 100 = 120:$$

⁴ Анастаси, 2001, стр 90

Դա նշանակում է, որ նրա մտավոր օժտվածությունը զգալիորեն բարձր է միջին աստիճակից: Ընդհակառակը, եթե 10 տարեկան երեխան կարողանում է լուծել 8 տարեկանների համար նախատեսված թեստեր, բայց արդեն 9 տարեկանների համար նախատեսված թեստեր լուծել չի կարողանում, ապա նրա մտավոր օժտվածության գործակիցը հաշվում են այսպես.

$$\frac{8}{10} = \frac{8}{10} \times 100 = 80:$$

Սա միջինից զգալիորեն ցածր է:

Ըստ ԲԳ-ի մեծության՝ մարդկանց բաշխում են մի սանդղակի վրա, որը ներկայացնում ենք աղյուսակի ձևով:

ԲԳ	Անվանումը
139-ից բարձր	Մտավոր օժտվածության շատ բարձր աստիճան (տաղանդ)
120-139	Բարձր
110-119	Միջինի վերին եզրը
90-109	Միջին
80-89	Միջինի ստորին եզրը
70-79	Սահմանային
70-ից ցածր	Մտավոր հետամնացություն

Երբեմն 140-ից մեծ ԲԳ ունեցողներին անվանում են հանճարներ, բայց դա այնքան էլ ճիշտ չէ: Թեև բոլոր տաղանդավոր և հանճարեղ մարդիկ մեծ ԲԳ են ունենում, այնուամենայնիվ լինում են նաև մեծ ԲԳ ունեցողներ, ովքեր կյանքում տաղանդի կամ հանճարի հատկություններ չեն դրսևորում: Ինչ վերաբերում է մտավոր հետամնացությանը, ապա սանդղակի այս մասը բաժանվում է երեք աստիճանի: Դեբիլները կամ մորոնները նրանք են, ովքեր հասնում են 7-10 տարեկանների մտավոր զարգացման մակարդակին և կանգ են առնում այդ աստիճանի վրա: Նրանք կարողանում են կարդալ, գրել և ձեռքի պարզ աշխատանք կատարել: Իմբեցիլները մնում են 2-7 տարեկան երեխաների մտավոր զարգացման մակարդակի վրա: Նրանք կարողանում են վերահսկել իրենց բնական օրգանական ֆուկցիաները, կարողանում են ինքնուրույն քայլել, խոսելու որոշ, թեև թույլ կարողություններ են ձեռք բերում, կարողանում են ճիշտ կատարել մեծահասակների որոշ պահանջներ: Ապուշները կամ իդիոտները տառապում են մտավոր հետամնացության ամենախոր աստիճանով: Նրանք չեն

կարողանում խոսել սովորել, չեն կարողանում վերահսկել իրենց մարմնի բնական ֆունկցիաները, չեն կարողանում հասարակ հարմարվողական ինքնուրույն գործողություններ կատարել:⁵

1.3 Արտակարգ օժտվածությամբ դպրոցականների հետ մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները

Առանձնահատուկ, իր տարիքին ոչ բնորոշ մտավոր բարձր ունակություններ ունեցող դպրոցականների հետ աշխատանքը բավականին բարդ և բազմաթիվ խնդիրներ առաջացնող գործընթաց է, քանի որ նման երեխաների հոգեկան և մտավոր զարգացումն ակնհայտորեն առաջ է ընկած իրենց հասակակիցների համեմատությամբ: Արտակարգ ունակությունների տեր դպրոցականների հոգեկան յուրահատկությունների ուսումնասիրությունը, օժտվածության վաղ բացահայտումը, նրանց մտավոր և անձնային զարգացումը ճիշտ ուղու վրա դնելու անհրաժեշտությունը կարևոր է ոչ միայն տվյալ երեխաների և նրանց ընտանիքների համար, այլ նաև հասարակության համար՝ ելնելով այն փաստից, որ յուրաքանչյուր տաղանդավոր մարդ իրենից ազգային հարստություն է ներկայացնում: Երբ երեխայի մտավոր օժտվածությունն ակնհայտ է, ուսուցիչները հաճախ չեն իմանում, թե ինչպես վարվել՝ խթանել՝ նրա մտավոր զարգացումը, էլ ավելի շատ բան սովորեցնել՝ նրան, թե՞ ամեն ինչ անել, որպեսզի երեխան դառնա այնպիսին, ինչպիսին բոլորն են: Նման մտավոր բարձր ունակությունների տեր երեխայի հետ աշխատող ուսուցիչը հաճախ հայտնվում է ներքին հակասության ու կոնֆլիկտի մեջ, քանի որ ինտուիտիվ կերպով զգում է, որ արտառոց ընդունակ մարդու համար հասարակական կյանք ու մարդկային շփումներ կառուցելն այնքան էլ հեշտ չէ. ինչպես մարդկության պատմության փաստերն են ցույց տալիս, տաղանդավոր կամ հանճարեղ մարդիկ մեծ մասամբ ծանր անձնական ճակատագրեր են ունեցել: Ուսուցիչների մոտ կարող է առաջանալ նաև հետևյալ հարցը՝ արդյոք անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նման օժտվածությանը, զբաղվել դրա վաղ բացահայտմամբ կամ հատուկ կրթական ծրագրեր մշակել: Հարցի վերաբերյալ կան բազմաթիվ դիրքորոշումներ, որոնցից ամենատարածվածն է՝ «Տաղանդն ինքը կհարթի իր

⁵ Նալչաջյան, 2016, էջ 83-110

ճանապարհը»: Սա ենթադրում է այդ ուղղությամբ որևէ քայլ չձեռնարկելը: Մենք կարծում ենք, որ սա սխալ մոտեցում է, քանի որ այն պարզապես նշանակում է աչք փակել խնդրի առջև:

Հայտնի փաստ է, որ օժտված երեխան բարդ անհատականություն է, և նրա հետ շփվելիս (լինի դա ընտանիքում թե ուսումնական հաստատությունում) պետք է շատ զգույշ լինել՝ չխաթարելու համար նրա անձի բնականոն զարգացումը: Բանն այն է, որ երբեմն, անգամ լավագույն մղումներից դրդված, հնարավոր է վնասել երեխայի անձը, քանի որ նախ և առաջ այն զգայուն վիճակում է՝ կապված դպրոցական տարիքի հետ, ապա նաև հատուկ օժտվածության առկայության պատճառով: Ծնողների շրջանում սովորաբար տարածված է հետևյալ դիրքորոշումը՝ «ես տաղանդավոր երեխայի ծնող եմ, իմ երեխան տաղանդավոր է»:⁶ Նման դիրքորոշումը անմիջականորեն կապված է ծնողի ներքին հպարտության հետ, նրա անձնային ինքնահաստատման ու ինքնահարգանքի բարձրացմանը: Սա շատ վտանգավոր հոգեբանական դիրքորոշում է և կարող է երեխայի վրա ծանր հետևանքներ թողնել: Պետք է նշել, որ բավականին տարածված են դեպքերը, երբ երեխայի նույնիսկ ամենասովորական և օրինաչափ ձեռքբերումն այնքան հրճվանք է պատճառում ծնողին, որ նա անմիջապես և առանց այլևայլության իր երեխայի վրա դնում է «տաղանդավոր», «հանճարեղ» պիտակները: Այսպիսի դեպքերում խոսքը ծնողի յուրահատուկ կերպարի մասին է, որը երեխայի մեջ ընդամենը ցանկանում է տեսնել իր հոգեմարմնական շարունակությունը՝ իր անձնային ինքնահաստատման միջոց ընտրելով երեխային: Վերը նշվածի վառ օրինակ է Կ. Ա. Նալչաջյանին հայտնի հետևյալ դեպքը. չորս տարեկան երեխային ծնողները սովորեցրել էին Ռեմբրանդտի ստեղծագործությունների վերնագրերը և տարբեր առիթներով հյուրերի և ծանոթների առջև դրանք երեխային թվարկել էին տալիս: Գոհ և հպարտ է երեխան, քանի որ ծնողներին այդքան մեծ հրճվանք է պատճառում՝ թեկուզ և չհասկանալով, որ այդ անվանումները իրեն ոչինչ չեն ասում: Գոհ և հպարտ են նաև ծնողները, քանի որ մեկ անգամ ևս բոլորի առջև նրանք ներկայանում են որպես «հրաշամանուկի» ծնողներ: Ծնողական նման հարկադրանքից ազատվելու համար երեխան սկսում է «չդիմանալ»՝ խռովություն բարձրացնել, պահանջել իրեն հանգիստ թողնել, որոշ դեպքերում անգամ՝ կակազել կամ այլ հոգեմարմնական ախտանշաններ դրսևորել: Միանգամայն հասկանալի է

⁶ Петровский, 1983, стр. 60-73

դառնում, որ երեխայի մտավոր ունակությունների նմանօրինակ գերազնահատումը վտանգավոր է թե՛ երեխայի ներդաշնակ հոգեկան զարգացման համար, թե՛ գիտելիքի և մտավոր գործունեության հանդեպ նրա մեջ տևական հակակրանքի առաջացման համար: Մյուս հնարավոր և կրկին բավականի տարածված իրավիճակն այն է, որ երեխան իսկապես ունի մտավոր բարձր օժտվածություն: Այս դեպքում ծնողները, գիտակցելով իրենց զավակի արտակարգ ընդունակ լինելը, սկսում են տազնապել և վախենալ երեխայի ճակատագրի համար՝ գիտակցելով հրաշամանուկ լինելու բարդությունները: Պետք է նշել, որ այդ վախը ինչ-որ չափով հիմքեր ունի. հասարակությունը գրեթե միշտ և ամենուր դժկամությամբ է ընդունում բարձր ինտելեկտուալներին: Եվ ծնողները, որոնք իրենց երեխայի երջանկությունն ամեն ինչից վեր են դասում, ստիպում են երեխային դառնալ «սովորական»։ Նրանք ձգտում են սահմանափակել երեխայի մտահորիզոնը, արգելափակել մտավոր զարգացումը: Սա, ըստ էության, իրենից ներկայացնում է երեխայի անձի ճնշում, որը նույնքան վտանգավոր է, որքան և նկարագրված առաջին դեպքը: Խնդիրն այն է, որ նման դիրքորոշումը անցանկալի հետևանքներ է թողնում երեխայի ոչ միայն ներդաշնակ հոգեկան զարգացման վրա, այլ նաև վերջինիս մեջ ստեղծում է «իմացական ապատիա», որը մտավոր օժտվածություն ունեցող անձի համար ներքին կոնֆլիկտների աղբյուր է:⁷

Հարց է առաջանում՝ ի՞նչ անել, ինչպե՞ս ճիշտ կողմնորոշվել նման մանկավարժահոգեբանական նուրբ հարցերում: Նախ և առաջ պետք է ճիշտ կողմնորոշվել իրողությունների մեջ, այսինքն՝ երեխան իսկապե՞ս ունի մտավոր բարձր օժտվածություն, թե՞ դա ուղղակի մեծահասակների կարծիքն է: Միայն սրանից հետո կարելի է խոսել ոչ սովորական ընդունակություններով օժտված երեխայի կրթության և առողջ սոցիալականացման խնդիրների մասին: Առաջանում է մեկ այլ հարց՝ ինչպե՞ս զանազանել օժտված երեխային սովորական օրինաչափ ինտելեկտուալ զարգացում ունեցող երեխայից, ինչպիսի՞ն է նա, ինչպե՞ս կարելի է ամենավաղ տարիքից սկսած բացահայտել հատուկ օժտվածություն ունեցող երեխաներին, որո՞նք են նրանց վարքի այն օրինաչափ դրսևորումները, որոնց վրա հիմնվելով՝ կարող ենք հաստատել երեխայի տաղանդավոր լինելու փաստը:

⁷ Նալչաջյան, 2013, էջ 71-72

Օժտված երեխաները իմացական գործընթացների առումով դրսևորում են հետևյալ օրինաչափությունները: Այս երեխաները կարծես «կլանում են» այն ողջ ինֆորմացիան, որի հետ առնչվում են: Ժան Պիաժեն՝ երեխաների մտածողության զարգացման բնագավառի ականավոր հետազոտողը, երեխայի իմացական պահանջմունքը համեմատում է քաղցի հետ. ինչպես օրգանիզմը սննդի պահանջ ունի, կամ թոքերը՝ թթվածնի, այնպես էլ երեխայի ուղեղը ծարավ է ինֆորմացիայի: Երեխայի ուղեղի «ախորժակը» սահմաններ չի ճանաչում, իսկ «մարսելու» ունակությունը ուղղակի ապշեցուցիչ է: Կլանվելով իրենց հետաքրքրող զբաղմունքով՝ այսպիսի երեխաների համար շրջապատը ասես դադարում է գոյություն ունենալուց: Որպես կանոն, նրանք շատ հետաքրքրասեր են և ձգտում են բացահայտել երևույթների պատճառահետևանքային կապերը կամ, փոփոխելով իրադրության պայմանները, հետևում են, թե դրա հետևանքով ինչ տեղի կունենա: Այլ կերպ ասած՝ նրանք անընդհատ փնտրում են «ինչու՞ է այդպես» և «իսկ ի՞նչ կլինի, եթե...» հարցերի պատասխանները:⁸

Մանկական օժտվածության նշան է նաև փայլուն հիշողության առկայությունը: Շատ հաճախ ստեղծվում է այն տպավորությունը, որ երեխայի գլխում «տպվում է» այն ամենը, ինչ նա երբևէ տեսել կամ լսել է: Օժտված երեխաներին բնորոշ է նաև ստացած ինֆորմացիայի դասակարգումը, համակարգ և օրինաչափություն գտնելն անգամ այնտեղ, որտեղ դա կարծես ակնհայտ չէ: Սա, սակայն, չի նշանակում պարզապես իրերը դասավորել, թափթփված չլինել: Երբեմն ճիշտ հակառակն է տեղի ունենում. դասակարգումներ անելիս երեխան կարող է շուրջը խամռաշփոթ ստեղծել: Արտառոց ունակությունների տեր երեխան սիրում է նոր, սրամիտ տարրեր մտցնել արդեն հայտնիի մեջ: Որպես կանոն, նման երեխան ունի հարուստ բառապաշար, շարահյուսական ճկուն և բարդ միավորները հեշտությամբ է կառուցում, հակում ունի «ստեղծելու» նոր բառեր: Տաղանդավոր երեխայի համար անտանելի է, երբ նրան պատրաստի պատասխաններ են հուշում, քանի որ դրանով վերջինս զրկվում է խնդրի լուծումը ինքնուրույն գտնելու հաճույքից:⁹

Տաղանդավոր երեխային բնորոշ է նաև խոսքի արագ զարգացումը, մեծ մասամբ վատ քնելը, անընդհատ ակտիվ վիճակում լինելու հակում ունենալը: Սոցիալ-հոգեբանական տեսանկյունից այս երեխաներն ունենում են ուժեղ

⁸ Նալչաջյան, 2013, էջ 79

⁹ Тэкек, 1961, с. 43-75

արտահայտված Էմպաթիա (ապրումակցում՝ ուրիշի հուզական վիճակի մեջ մտնելու կարողություն) և արդարամտություն: Նրանք կարող են ազդվել հեքիաթի հերոսների ճակատագրով, խաղերի ժամանակ արդարություն պահանջել: Տաղանդավոր երեխաները ունեն վառ երևակայություն, հետևաբար նրանք կարող են գունագեղ պատմություններ հորինել՝ դրանք ներկայացնելով որպես իրականություն: Երևակայության նման թռիչքը նրանց ուղեկցում է ողջ կյանքում՝ դառնալով ստեղծագործելու և ոչ ստանդարտ լուծումներ որոնելու մղող հզոր ուժ: Տաղանդավոր երեխան ունի նաև հումորի զգացում. նա սրամիտ արտահայտությունների ու մտքերի շտեմարան է, տեսնում է ծիծաղելի և երգիծական բաներ անգամ այնտեղ, որտեղ սովորական ընդունակություններ ունեցող իր հասակակիցը որևէ արտառոց բան չի նկատում: Օժտված մարդու, այդ թվում նաև երեխայի կյանքում հումորի զգացումը հոգեբանական պաշտպանական ֆունկցիա է կատարում՝ հնարավորություն ստեղծելով հեշտացնել նրա հասարակական շփումները:

**ԳԼՈՒԽ 2. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՈՆԵԿՏԻՎՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ
ՏԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ–ՅՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆ**

2.1. Ավագ դպրոցում արտակարգ օժտվածությամբ դպրոցականների սոցիալ–հոգեբանական ադապտացիայի առանձնահատկությունները պարզող հետազոտության քանակական տվյալները


Սույն աշխատանքի համատեքստում մեր կողմից իրականացվել է հետազոտություն՝ պարզելու համար դպրոցական միջավայրում արտակարգ օժտվածությամբ դպրոցականների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունները: Մասնավորապես՝ մեր կողմից կիրառվել է հոգեբանական գրույցի, ինչպես նաև՝ հոգեբանական հարցման մեթոդը. կազմվել է հարցաշար՝ բաղկացած 20 հարցից:

Այստեղ տեղին է նշել, որ հաշվի առնելով աշակերտների հետ օժտվածության չափման թեստերի անցկացման հետ կապված էթիկական խնդիրները՝ մենք նախընտրեցինք հարցաշարի միջոցով պարզել դպրոցական կուլեկտիվում աշակերտների հարմարվածության գործընթացի օրինաչափությունները, որոնց հետ համադրելով հարցվող աշակերտների անձնային այլ բնութագրիչները այդ կերպ նախ՝ առանձնացնել արտակարգ օժտվածությամբ աշակերտներին, ապա՝ ընդհանուր պատկերացում կազմել դպրոցական միջավայրում նրանց սոցիալ-հոգեբանական հարմարման օրինաչափությունների վերաբերյալ:


Հարցաշարի նմուշը ներկայացված է սույն աշխատանքի հավելված 1-ում: Չետազոտությունն անց է կացվել Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի միջնակարգ դպրոցում, թվով 42 աշակերտի հետ, որոնցից 11-ը՝ տղա, 31-ը՝ աղջիկ:

Ստորև ներկայացվում է անցկացված հարցման քանակական տվյալները՝ գրաֆիկական տեսքով


1. Դպրոցական առարկաներից ո՞րն է քեզ համար ամենասիրելին




2. Նկարագրի՛ր, թե որոնք են քո հետաքրքրությունները



3. Ինչո՞վ ես սիրում գրադվել, երբ ազատ ժամանակ ես ունենում:



4. Ու՞մ հետ է քեզ համար ավելի հետաքրքիր շփվելը՝ մեծահասակների, թե՛ հասակակիցների:




■ հասակակիցների ■ մեծահասակների ■ թե՛ հասակակիցների, թե՛ մեծահասակների

5. Քո համադասարանցիներից շատե՞րն են քո ընկերները:




■ ոչ, մի քանիսը
■ այո, շատերը
■ ոչ մեկը


6. Ընկերներ շա՞տ ունես:




7.1. Նկարագրի՛ր, թե ինչի մասին ես գրուցում ընկերների հետ:




7.2. Նկարագրի՛ր, թե ինչով ես զբաղվում ընկերների հետ:




8. Քո ընկերների հետ ունե՞ս ընդհանուր հետաքրքրություններ:




9. Պատահո՞ւմ է, որ վիճաբանես ուսուցիչների հետ:




10.1. Քո սիրելի առարկայի դասին ակտիվ լինո՞ւմ ես:




10.2. Քո սիրելի առարկայի դասին հաճա՞խ ես հարցեր տալիս ուսուցչին:




11. Քո հասակակիցները հասկանո՞ւմ են քեզ:




12. Ո՞ր առարկաների դասերին ես հաճախում հաճույքով:



13. Ուսուցիչները հասկանում են քեզ:







14. Քեզ համար հեշտ է շփվել քո հասակակիցների հետ:




■ այո ■ մասամբ ■ ոչ

15. Ինչպիսի՞նք ըստ քեզ պետք է լինի ուսուցիչը:






19. Նկարագրի՛ր, թե ապագայի ինչ ծրագրեր ունես:



20.1. Մասնագիտական ընտրություն կատարե՞լ ես արդեն:





20.2. Այդ հարցում ուսուցիչները քեզ օգնու՞մ են




Դատելով հարցման արդյունքներից՝ մասնակիցներից 9-ը դպրոցական միջավայրում լիարժեք հարմարված չեն: Նման հետևության համար հիմք են հանդիսացել հետևյալ երկու հանգամանքները՝ շատ ընկերներ չունենալն ու


ուսուցիչների հետ հաճախ վիճաբանելը: Ահա այս՝ դպրոցական միջավայրում լիարժեքորեն չհարմարված աշակերտների անձնային նկարագրի որոշ կողմեր լիարժեք պատկերացնելու նպատակով նրանց հետ կազմակերպվեց լրացուցիչ հարցում, ինչպես նաև՝ կիրառվեց հոգեբանական գրույցի մեթոդը:




3. Քո հասակակիցները հասկանու՞մ են քեզ



4. Միրու՞մ ես շփվել համադասարանցիներիդ հետ:



5. Նկարագրի՛ր, թե որոնք են քո հետաքրքրությունները



2.2. Ավագ դպրոցում արտակարգ օժտվածությամբ դպրոցականների սոցիալ-հոգեբանական ադապտացիայի առանձնահատկությունները պարզող հետազոտության տվյալների վերլուծություն

Ի մի բերելով հետազոտության արդյունքները հանգում ենք հետյալ հետևություններին:

Արտակարգ օժտվածությամբ դպրոցականն ինքնատիպ անհատականություն է բառի բուն և միևնույն ժամանակ ամենաընդգրկուն իմաստով: Նման երեխաները էապես տարբերվում են իրենց հասակակիցներից:

Տարբերվում են ամեն ինչում. նրանք ավելի հասուն են ընկալվում մեծահասակների կողմից, քանզի հանդես են բերում այնպիսի հետաքրքրություններ, որոնք հատուկ են զարգացած-ինտելեկտուալ կարողություններ ունեցող չափահասներին: Բնականաբար իրենց՝ այդ տարիքին չհամապատասխանող հետաքրքրություններով արտակարգ օժտվածության տեր դպրոցականները հրապուրիչ ոչինչ չեն տեսնում իրենց հասակակիցների միջավայրում, որտեղ հետաքրքրությունները, նման երեխաների ընկալմամբ, չափից դուրս պարզունակ են: Բնականաբար հասակակիցներն էլ նման դպրոցականներին չեն ընկալում իբրև յուրային, քանի որ այն, ինչ հետաքրքրում է իրենց, բոլորովին չի հետաքրքրում օժտված երեխաներին: Հասակակիցները օժտված երեխայի այդ անհետաքրքրությունը իրենց համար հաճելի ընկալվող զբաղմունքների հանդեպ ընկալում են իբրև գոռոզություն: Արդյունքում հասակակիցների և օժտված երեխայի միջև որպես կանոն ստեղծվում է հոգեբանական անջրպետ: Օժտված դպրոցականները դժվարությամբ են ինտեգրվում հասակակիցների միջավայրում և շատ հաճախ ցանկություն են չեն ունենում ինտեգրվելու, շփվելու: Այս հանգամանքը դպրոցում պետք է հաշվի առնվի ուսուցիչների կողմից: Ուսուցիչների խնդիրը պետք է լինի գտնել այն «կապող օղակները», որոնք թույլ կտան հաղթահարել օժտված աշակերտի և իր հասակակիցների միջև անջրպետը: Տվյալ դեպքում հարկ է հատուկ ընդգծել, որ բացառիկ օժտվածությունն անկասկած դրական երևույթ է, հպարտության արժանի, և նման դպրոցականների օժտվածությունը զարգացնելը պետք է լինի թե՛ ծնողների և հարազատների, թե՛ դպրոցի խնդիրը, քանզի բացառիկ օժտվածությամբ երեխաները կարող են ակնառու կերպով օգտակար լինել հասարակությանը, հայրենիքին: Սակայն այդ ամենի հետ մեկտեղ՝ արտակարգ օժտվածությամբ դպրոցականները պետք է նաև հաջողությամբ ինտեգրված լինեն իրենց հասակակիցների միջավայրում, անձի ձևավորման համար կարևորագույն դեռահասության շրջանում ձեռք բերեն հաղորդակցական և հարմարվողական հմտություններ, ինչը թույլ կտա նրանց հեշտությամբ հարաբերվել սոցիալական միջավայրում: Ավելին՝ այդ հաղորդակցական և հարմարվողական հմտությունները իրենց արտակարգ օժտվածությունը իրացնելու կարևորագույն նախադրյալներից մեկն է: Հետևաբար ավագ դպրոցում, դպրոցական միջավայրում նման արտակարգ օժտվածությամբ դպրոցականների՝ իրենց հասակակիցների միջավայրում ինտեգրելը կարևորագույն խնդիր է, որը պետք է

լուծվի ուսուցիչների գրագետ հոգեբանամանկավարժական մոտեցումների միջոցով: Այս առումով հարկ է հաշվի առնել հետևյալը. ուսումնական գործընթացում արտակարգ օժտվածությամբ աշակերտները հանդես են բերում նախաձեռնողականությու, երբեմն՝ ակնառու ակտիվություն՝ մանկական միամտությամբ ցանկանալով առաջինը պատասխանել ուսուցչի կողմից կատարվող բարդ հարցադրումներին: Եթե անգամ նման աշակերտները աչքի չեն ընկնում գերազանց գնահատականների մեծ թվով, այնուամենայնիվ նրանք ուսումնական գործընթացում աչքի են ընկնում օրիգինալ հարցադրումներով, սեփական տեսակետը արտահայտելու հակվածությամբ: Հիմնականում որպես կանոն ուսուցիչները դրվատանքով են վերաբերվում նման հետաքրքրասիրությանը, ակտիվությանը: Եվ ահա ուսուցչի այս օբյեկտիվ դրական վերաբերմունքը կարող է համադասարանցիների մոտ նախանձ առաջացնել: Այդ նախանձը կարող է էլ ավելի բարդացնել այդ երեխաների ինտեգրումը հասակակիցների միջավայրում: Այս խնդիրը վառ արտահայտված կարող է դառնալ, եթե ուսուցիչը բոլորի ներկայությամբ գովում է արտառոց ընդունակություններով երեխաներին, կամ էլ եթե նրան իբրև համեմատություն է բերում ուրիշներին նախատելու ֆոնին: Այս հանգամանքը այն մեծ մանկավարժական սխալն է, որից պետք է խուսափեն ուսուցիչները, քանզի այդ կերպ նրանք ակամա տրամադրում են դասարանը օժտված աշակերտի հանդեպ: Հարց է ծագում՝ որն է այս դեպքում լուծումը: Իսկ վերջինս հետևյալն է. անշուշտ հարկավոր է գովել և խրախուսել օժտված դպրոցականին իր հետաքրքրասիրության, բարձր առաջադիմության համար: Անշուշտ այդ դրվատանքի խոսքերը ավելի կխթանեն օժտված աշակերտի մոտ սովորելու, առաջադիմություն ունենալու ներքին ձգտումը: Բայց սկզբունքորեն անթույլատրելի է այդ դրվատանքի խոսքերը ասել կոպիտ համեմատության և այլոց հետ հակադրության ֆոնին: Մեկ ուրիշին նախատելու համատեքստում դրվատանքով արտահայտվել օժտված երեխայի մասին նշանակում է լարվածության սկիզբ դնել, որը իր դրսևորումը կունենա ոչ ֆորմալ փոխհարաբերություններում: Հետևաբար որպեսզի վերջինս տեղի չունենա, հարկավոր է նախ գտնել մի ինչ-որ դրական բան յուրաքանչյուր աշակերտի մոտ և ուսումնական պրոցեսում օժտված երեխային գովելուն զուգահեռ գովել նաև այլոց: Շատ կարևոր է, որ օժտված աշակերտին գովելը դասարանում չընկալվի իբրև արտառոց մի բան: Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ուսուցչից

ստանա դրվատանքի և գովեստի իր բաժինը, առավել ևս որ ցանկացած երեխայի մոտ կարելի է գտնել մի այնպիսի հատկություն, որը կլինի օգտակար: Առավել ևս միշտ կարելի է գտնել մի այնպիսի ոլորտ դպրոցական առօրյայում, որտեղ իրեն կկարողանա դրսևորել անգամ ամենավատ առաջադիմությամբ կամ «անկարգ» ընկալվող աշակերտը: Եվ հետո այդ ոլորտում նրա ձեռքբերումները գովաբանելը կխթանեն նրա հաջողությունը բուն ուսումնական գործընթացում: Այլ կերպ ասած՝ սրտացավ մոտեցման դեպքում յուրաքանչյուր աշակերտի մոտ կարելի է առաջացնել սովորելու, առաջադիմություն ունենալու ցանկություն: Ըստ այդմ՝ միշտ կարելի է գտնել, թե ինչի համար գովաբանել այս կամ այն աշակերտին: Եվ ահա, երբ դասարանում բոլորը ուսուցչից տեսնեն իրենց հանդեպ դրական վերաբերմունք, գնահատված զգան ուսուցչի կողմից, ապա արտառոց օժտվածությամբ երեխաներին գովաբանելը սուր արտահայտված նախանձ չի առաջացնի: Իսկ եթե այդ ամենի հետ մեկտեղ ուսուցիչը գտնի այն ընդհանուր հետաքրքրության շրջանակը, որը հնարավոր կդարձնի արտառոց օժտվածությամբ երեխայի համատեղ գործունեությունը իր համադասարանցիների հետ, ապա արտառոց օժտվածությամբ երեխայի համար դասարանում կստեղծվի բարենպաստ մթնոլորտ:

Տվյալ դեպքում առկա է նաև մեկ այլ խնդիր, որին տեղին է անդրադառնալ: Խոսքն արդեն ուսուցչի և օժտված երեխայի միջև գրագետ փոխհարաբերությունների հաստատման մասին է: Մասնավորապես՝ երբեմն պատահում է այնպես, որ դասի ընթացքում օժտված աշակերտի հետաքրքրասիրությունը, դիպուկ և օրիգինալ հարցադրումները, ինչպես նաև սեփական կարծիքը, ուսուցչի կողմից բարձրացված հարցի վերաբերյալ իր տեսակետները համարձակորեն արտահայտելը կարող են «դուր չգալ» ուսուցչին: Որպես կանոն այդպես է պատահում այն ժամանակ, երբ ուսուցիչը կա՛մ լիարժեք չի տիրապետում ուսումնական նյութին, կա՛մ բավարար չափով ինքնահաստատված չէ իր դերում և օժտված աշակերտի ակտիվությունը ընկալում է իբրև իր հեղինակության դեմ ուղղված մի բան: Այդ պարագայում ուսուցչի և օժտված աշակերտի միջև ծավալվում է յուրահատուկ մրցակցություն, ընդ որում՝ իրավիճակը այդպես է ընկալում ուսուցիչը, իսկ ահա օժտված աշակերտի համար իր ակտիվությունը ընդամենը աչքի ընկնելու և ուսուցչի դրվատանքին արժանանալու ներքին մոտիվացիան ունի կամ էլ իրեն իսկապես հետաքրքրող հարցի վերաբերյալ ճշմարտությունը բացահայտելու նպատակը:

Եթե ուսուցիչը ունակ չի լինում զսպել իր անբարյացակամությունը նման աշակերտների հանդեպ, ավելին՝ եթե այդ անբարյացակամությունը ակնհայտորեն արտահայտում է, ապա իր այդ հակամանկավարժական մոտեցմամբ կարող է ոչ միայն վիրավորել երեխայի անձը, այլև Էապես խոչընդոտել նրա օժտվածության զարգացմանը, քանզի հանրահայտ է, որ օժտվածությունը զարգանում է երեխայի իմացական հետաքրքրասիրությունը խրախուսելով, նրա հետ հետաքրքիր-ինտելեկտուալ հարցեր քննարկելով: Հիշենք, որ տաղանդի ձևավորման համար նպաստավոր են կրթված մարդկանց միջավայրն ու սովորելու հնարավորությունները, այլապես նույնիսկ հրաշամանուկները կարող են «թառամել»: Առանց հատուկ ուսուցման, առանց ընտանեկան և ավելի լայն սոցիալական միջավայրի բարենպաստ պայմանների միայն արտակարգ օժտվածություն ունեցող փոքրաթիվ մարդիկ են կարողանում հաջողությունների հասնել և գտնել իրենց կոչումը: Այսպիսով՝ ընդունակությունը բնածին նախադրյալների և միջավայրի պայմանների փոխներգործության արդյունքն է, ընդ որում՝ յուրաքանչյուր ընդունակության ձևավորման ընթացքում այդ գործոններից յուրաքանչյուրի ներդրումը տարբեր կշիռ ունի: Այս համատեքստում ուսուցչի մանկավարժական անտակտությունը կարող է իսկապես լուրջ վնաս հասցնել օժտված երեխայի ինտելեկտուալ զարգացմանը:

Ավագ դպրոցում օժտված աշակերտի ադապտացիայի հաջողությունը մեծապես պայմանավորված է մինչ ավագ դպրոց հաճախելը սոցիալականացման այլ ինստիտուտներում սոցիալ-հոգեբանական ադապտացիայի հմտությունների ձևավորված լինելու հանգամանքով: Այլ կերպ ասած՝ եթե մինչ ավագ դպրոց հաճախելը ընտանիքում նման երեխան հեշտությամբ է հարմարվել մանկապարտեզում, հանրակրթական դպրոցում, ապա ավագ դպրոցում էլ կհարմարվի հեշտությամբ, քանզի արդեն ունի հարմարվելու ձևավորված հմտություններ: Տվյալ դեպքում խոսքը սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ռազմավարությունների մասին է, որոնք ձևավորվում են աստիճանաբար՝ տարբեր խմբերում գործունեություն ծավալելիս:

Ահա այստեղ է, որ առաջին պլան է մղվում ավագ դպրոցի՝ սոցիալականացնող և երեխայի անձը հասունացնող գործընթացը, մասնավորապես, տվյալ դեպքում պետք է, որպեսզի ուսուցիչները և հատկապես դասղեկը, առանց երեխայի անձը «կոտրելու», առանց նրան վիրավորելու, նվաստացնելու, այսինքն՝ առանց հոգեկան խեղում պատճառելու, ամեն կերպ

ընդգծեն նրա տեղն ու դիրքը հասակակիցների կուլեկտիվում: Անշուշտ այդ «հավասարությունը», մասնավորապես՝ մյուս հասակակիցների հանդեպ ուսուցչի հավասար ուշադրությունը, այդ հասակակիցներից ոչնչով չտարբերվելու հանգամանքը, հասակակիցներին զիջելու անխուսափելիության ընկալումը նման երեխաները հոգեբանորեն ցավոտ են տանում: Միայն այս ուղին է, որը թույլ կտա օժտված երեխային ապագայում գտնել սեփական տեղը հասարակությունում, մարդկանց հետ հարաբերություններ ստեղծել, անհրաժեշտ հաղորդակցման որակներ ձեռք բերել և ի վերջո սոցիալական միջավայրի հետ ներդաշնակ փոխհարաբերություններ հաստատել:

Այս ամենից զատ հարկավոր է նաև զննել նման դպրոցականին, հայտնաբերել նրա այն հետաքրքրությունները, որոնք համատեղելի են դպրոցական ուսումնական գործունեության հետ և ընդառաջ գնալ և թույլ տալ նրան ինքնադրսևորվել: Սոցիալ-հոգեբանորեն հարմարվելու առաջին քայլը կարող է լինել նոր միջավայրում հաճելի զբաղմունք ունենալը: Սա այն հոգեբանական բանալին է, որով հնարավոր է կապել նման երեխաներին դպրոցի և դասարանի հետ:

Այսպիսով՝ ավագ դպրոցական տարիքում արտակարգ օժտվածությամբ դպրոցականի մոտ հաղորդակցական և հարմարվողական հմտությունների ձևավորումը ավագ դպրոցի սպեցիֆիկ, բայց շատ կարևոր գործառույթներից է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ընդունակություններն անձի այն ներհոգեկան առանձնահատկություններն են ու դրանց համադրությունները, որոնք նրան թույլ են տալիս տիրապետել որոշակի գործունեության կատարման համար անհրաժեշտ

- գիտելիքների, կարողությունների և հմտությունների և արդյունավետորեն կատարել այդ գործունեությունը:
2. Ընդունակությունները գիտելիքների և հմտությունների յուրացման ներքին պայմաններն են և չեն կարող հանգեցվել այդ գիտելիքներին և հմտություններին, այսինքն՝ ընդունակությունների դրսևորման և օգտագործման արդյունքներին:
 3. Արտակարգ օժտվածությունը՝ տաղանդը, մարդու ընդունակությունների զարգացման բարձր աստիճանն է, մասնավոր ընդունակությունների, ընդհանուր օժտվածության և անձնային այլ հատկությունների այնպիսի զուգորդություն, որը նրան թույլ է տալիս արդյունավետորեն, ստեղծագործաբար և ինքնուրույնաբար կատարել որևէ գործունեություն:
 4. Սոցիալ-հոգեբանական ադապտացիան այն գործընթացն է, որի արդյունքում անձը այս կամ այն միջավայրում հայտնվում է հոգեկան ներդաշնակության հոգեվիճակում և ինչի շնորհիվ էլ ունակ է լինում արդյունավետ գործունեություն ծավալել:
 5. Արտակարգ օժտվածությամբ աշակերտի սոցիալականացման գործընթացը բնորոշվում է ուրույն դժվարություններով: Նման երեխայի արդյունավետ հաղորդակցական և հարմարվողական հմտությունների զարգացման նպատակով հարկավոր է ապահովել սոցիալականացման լիարժեքություն: Խոսքը մանկապարտեզ, այլ մանկական հաստատություններ և դպրոց հաճախելու մասին է, որտեղ երեխան կարող է ձեռք բերել կոլեկտիվում ներգրավվելու սոցիալական հմտություններ:
 6. Արտակարգ օժտվածությամբ ավագ դպրոցականների հետ ուսուցչի անհատական հոգեբանամանկավարժական աշխատանքի էությունը հետևյալն է. առանց աշակերտի հոգեկանը խեղելու ընդգծել նրա հավասար կարգավիճակը մյուս աշակերտների հետ: Մասնավորապես հարկավոր է գովել և խրախուսել օժտված աշակերտին ուսումնական գործընթացում հանդես բերած ակտիվության, հետաքրքրասիրության, բարձր առաջադիմության համար: Անշուշտ այդ դրվատանքի խոսքերը ավելի կխթանեն օժտված երեխայի մոտ սովորելու, առաջադիմություն ունենալու ներքին ձգտումը:
 7. Սկզբունքորեն անթույլատրելի է այդ դրվատանքի խոսքերը ասել կոպիտ համեմատության և այլոց հետ հակադրության ֆոնին: Այլ աշակերտին

Նախատելու ֆոնին դրվատանքով արտահայտվել օժտված աշակերտի մասին նշանակում է լարվածության ստեղծել նրանց միջև, որը իր դրսևորումը կունենա ոչ ֆորմալ փոխհարաբերություններում: Յետևաբար, որպեսզի վերջինս տեղի չունենա, հարկավոր է նախ գտնել մի ինչ-որ դրական բան յուրաքանչյուր աշակերտի մոտ և ուսումնական պրոցեսում օժտված աշակերտին գովելուն զուգահեռ գովել նաև այլոց: Ճատ կարևոր է, որ օժտված աշակերտն գովելը դասարանում չընկալվի իբրև արտառոց մի բան:

8. Հարկավոր է գտնել այն կապող օղակը, որով օժտված դպրոցականը կներգրավվի կոլեկտիվ գործունեության մեջ և կընդունվի աշակերտական կոլեկտիվի կողմից: Տվյալ դեպքում այդ կապող օղակի դերում կարող է հանդես գալ որևէ ընդհանուր հետաքրքրություն, որը հարկավոր է հայտնաբերել սրտացավ մանկավարժական աշխատանքի դեպքում:
9. Սոցիալական ադապտացիայի բարդություններ ունեցող արտակարգ օժտվածությամբ աշակերտների պարագայում ավագ դպրոցը կարող է իրականացնել հոգեբանորեն հասունացնող գործառույթ՝ նրանց մոտ հարմարվողական հմտություններ ձևավորելու միջոցով: Ահա այս խնդիրն է, որ պետք է լուծվի ավագ դպրոցում, ինչի արդյունքում արտակարգ օժտվածությամբ դպրոցականների մոտ կձևավորվի մարդկային հարաբերություններ կառուցելու համար անհրաժեշտ սոցիալական հմտություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. Նալչաջյան, Ա. (2016). *Հոգեբանության հիմունքներ*. Երևան: բուհական դասագիրք
2. Նալչաջյան, Ա. (1985) *Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական ադապտացիա*. Երևան
3. Նալչաջյան, Կ. (2013) *Մանկական օժտվածություն. պատրաստվե՞լ, թե՞ իրականություն*, «Մանկավարժական միտք». Պարբերական. թիվ 3 և 4

4. Анастаси, А. (2001). *Дифференциальная психология*. «Апрель Пресс», «ЭКМО-Пресс»
5. Лук, А. (1978). *Психология творчества*. «Наука»
6. Петровский, А. (1983). *Популярные беседы по психологии*. «Педагогика»
7. Тэкекс, К. Карне, М. (1991). *Одаренные дети*. сборник, пер. с англ.
8. Stern, W. (1871-1938). *Intelligenz der Kinder und Jugendlichen* Robarts - Universität Toronto. Leipzig.

ՀԱՎԵԼՎԱՅ 1

ՀԱՐՑԱԹԵՐԹ

1. Դպրոցական առարկաներից ո՞րն է քեզ համար ամենասիրելին:
2. Նկարագրիր, թե որոնք են քո հետաքրքրությունները:
3. Ինչո՞վ եք սիրում զբաղվել, երբ ազատ ժամանակ եք ունենում:
4. Ու՞մ հետ է քեզ համար ավելի հետաքրքիր շփվելը՝ մեծահասակների, հասակակիցների:

5. Քո համաասարանցիներից շատե՞րն են քո ընկերները:
6. Ընկերներ շատ ունե՞ս:
7. Նկարագրիր, թե ինչի մասին եք զրուցում, ինչով եք զբաղվում ընկերների հետ:
8. Քո ընկերների հետ ունե՞ք ընդհանուր հետաքրքրությունները:
9. Պատահու՞մ է, որ վիճաբանես ուսուցիչների հետ:
10. Քո սիրելի առարկայի դասին ակտիվ լինու՞մ ես, հաճա՞խ ես հարցեր տալիս ուսուցչին:
11. Քո հասակակիցները հասկանու՞մ են քեզ:
12. Ո՞ր առարկաների դասերին ես հաճախում հաճույքով:
13. Ուսուցիչները հասկանու՞մ են քեզ:
14. Քեզ համար հե՞շտ է շփվել քո հասակակիցների հետ:
15. Ինչպիսի՞ն, ըստ քեզ, պետք է լինի ուսուցիչը:
16. Ո՞ր առարկան է քեզ ամենից ավելի հետաքրքրում:
17. Սիրու՞մ ես շփվել համադասարանցիներիդ հետ:
18. Կցանկանայի՞ր լինել ուսուցիչ:
19. Նկարագրիր, թե ապագայի ինչ ծրագրեր ունես:
20. Մասնագիտական ընտրություն կատարե՞լ ես արդեն. այդ հարցում քեզ ուսուցիչներն օգնու՞մ են: